ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N2

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող

«Սոֆիա Մանուկյան Բաբկենի» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

03. 06.2024թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Սոֆիա Մանուկյան Բաբկենի» ԱՁ-ի միջև 02.02.2024թ-ին կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-10-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնմանվ - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ: Սակայն «Սոֆիա Մանուկյան Բաբկենի» ԱՁ-ի կողմից սահմանված ժամկերում չի իրականավել ապրանքի մատակարարում՝ խախտվելով պայմանագրով սահմանված վաճառողի պարտավորությունները, որի արդյունքում 24.05.2024թ-ին գնորդը միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը՝ այն համարելով լուծված 200622,24 (երկու հարյուր հազար վեց հարյուր քսաներկու դրամ, քսանչորս լումա) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները 24.05.2024թ «Սոֆիա Մանուկյան Բաբկենի» ԱՁ-ին ուղարկվել է համապատասխան

ծանոցում և տրվել է 5 օրացուցային օր՝ տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 59670 /հիսունինը հազար վեց հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 89505/ ութսունիը հազար հինգ հարյուր հինգ/ ՀՀ դրամը գումարները Շահառուի 900008000664 հաշվեհամարին փոխանցելու համար, սակայն սահմանված ժամկետում «Սոֆիա Մանուկյան Բաբկենի» ԱՁ-ի կողմից չի վճարվել պայմանագրի և որակավորման ապահովման ապահովումների գումարը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի « ա « պարբերությամբ.

ՈՐՈՇԵՑԻ

1. «Սոֆիա Մանուկյան Բաբկենի» ԱՁ -ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ